ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՏՆՈՐԴՆԵՐ» ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Արդեն երկրորդ տարին է, որ Երևանի «Հաղթանակ» զբոսայգում տեղի է ունենում «Հնչի՛ր, շեփոր» խորագրով փողային նվագախմբերի հանրապետական շքերթ-փառատոնը:

Այս տարի ևս, մայիսի 20-ին, Երևանի «Հաղթանակ» զբոսայգում մեկնարկեց Հայոց բանակի և Շուշիի հաղթանակի 15-ամյակներին նվիրված շքերթ-փառատոնը: Մասնակից 9 նվագախմբերի թվում էր նաև հանրապետական փառատոնի դափնեկիր Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը (գեղ. ղեկավար և գլխ. խմբավար՝ Մ. Մատինյան):

Նվագախումբի կատարմամբ հնչեցին Թուխմանովի «Հաղթանակի օրը» քայլերգը, Ֆուկի «Սլավոնական պոլկան», Պաուլսի «Մելոդիան», Ռապացկու «Երևան» քայլերգը և այլ ստեղծագործություններ, որոնց պրոֆեսիոնալ կատարումները արժանացան Երևանի խստապահանջ հանդիսատեսի բուռն ծափահարություններին:

«Վարդանանց հետնորդներ» խումբը Կրթության և գիտության նախարարության կողմից արժանացավ պատվոգրի:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ